ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. սեպտեմբերի 9-ից 14-ը Լեհաստանի Հանրապետություն՝ ք. Վրոցլավ կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

Նունե Պապիկյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության միջտարածաշրջանային համագործակցության և արարողակարգի բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Լեհաստանի Հանրապետություն (ք. Վրոցլավ)

4. **Հրավիրող կողմը**

Հրավերը ստացվել է Վրոցլավի քաղաքային վարչակազմի արտաքին հարաբերությունների գրասենյակի ղեկավարի կողմից: Ծրագիրը կազմակերպվել է GIZ հայաստանյան գրասենյակի հետ համատեղ:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Լեհաստանն ուսումնասիրելու քաղաքականության մշակման գործընթացներում երիտասարդների ներգրավմանը նպաստող ծրագրերի վերաբերյալ ք. Վրոցլավում կայանալիք ուսումնական ծրագրին մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները**

ԱլԳ անդամ երկրներից ժամանած մասնակիցները փոխանակվել են տեղական մակարդակում երիտասարդների մասնակցության վերաբերյալ տեղեկատվությամբ և հեռանկարային գաղափարներով:

Վրոցլավի քաղաքապետարանում տեղի ունեցան քննարկումների ընթացքում բարձրացվել են քաղաքային զարգացման և արտաքին հարաբերությունների

զարգացման, քաղաքը հանրահայտ դարձնելու, գովազդի, բրենդավորման, զարգացման ծրագրերի մասին հարցեր:

Անդրադարձ եղավ քույր քաղաքների ձևաչափով Վրոցլավի հետ համագործակցելու հնարավորություններին: Իմ կողմից ցանկություն հնչեց Գյումրին և Վրոցլավը քույրացնելու մասին: Վրոցլավի քաղաքապետարանից հայտնեցին, որ Կատովիցեում Հայաստանի հյուպատոսը ևս առաջարկել է Գյումրիի հետ համագործակցություն հաստատել քույր քաղաքների ձևաչափով, սակայն Վրոցլավի իշխանությունները հակված են մայրաքաղաք Երևանի հետ համագործակցել: Հարցը դեռևս քննարկման փուլում է:

Ներկայացվեց տեղական ինքնակառավարման, քաղաքային կառավարման Վրոցլավի մոդելը:

Դպրոցներում քննարկվել են յուրաքանչյուր երկրում հանրակրթական միջնակարգ դպրոցներում կրթական ծրագրերի առանձնահատկությունները, հնչեցվել են խնդիրներն ու մարտահրավերները: Զուգահեռներ են անցկացվել անդամ երկրներում դպրոցական և հետդպրոցական կրթական ծրագրերի միջև:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>

Հանդիպում քաղաքապետարանին կից երիտասարդական խորհրդի հետ: Հանդիպում Քաղաքային խորհրդի անդամ, Վրոցլավի քաղաքապետարանի կրթության և երիտասարդության հարցերով հանձնաժողովի նախագահ Էվա Վոլակի հետ,

Այցելություն Վրոցլավի քաղաքային վարչակազմի հանրային մասնակցության դեպարտամենտի հանրային բյուջեի գրասենյակ,

Այցելություն Վրոցլավի քաղաքային վարչակազմի կրթության գրասենյակ,

Բանախոս՝ Յոլանտա Բեդնարսկա - Միջնակարգ և հատուկ բաժնի փոխտնօրեն

Այց հանրակրթական դպրոց

Բանախոսներ՝

Մագդալենա Լազոպուլոս - Միջնակարգ դպրոցների բաժնի վարիչ

Միշալ Միկոլայեկ- Կրթական նախագծերի բաժնի վարիչ

Էլժբիետա Միխալսկա - Կրթական նախագծերի բաժնի գլխավոր մասնագետ

Ջասթինա Պատեր - WCRS կամավորական թիմի ներկայացուցիչ:

Մասնակցել եմ ՄԱԿ-ի Վրոցլավի մոդելի (WROCMUN) ծրագրի ժամանակակից համաշխարհային քաղաքականության խնդիրների վերաբերյալ ՄԱԿ-ի 150 լեհ և եվրոպացի ուսանողների նիստին:

Այցելություն «Երկխոսության անցում»՝ քաղաքային հանրային տարածք մշակութային, ինտեգրացիոն և կրթական միջոցառումների համար:

Այցելություն Վրոցլավում գտնվող Եվրախորհրդարանի գրասենյակ:

Հանդիպում Եվրոպական համերաշխության կորպուսի հետ:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Վրոցլավի օրինակով քաղաքային կառավարման և երիտասարդական խորհրդի աշխատանքի լավագույն փորձը տեղայնացնելու և մասնակից երկրների հաջողված փորձով կիսվելու ուղղությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկ է հնչել հետևողականորեն աշխատել երիտասարդական խորհուրդների դերը և կարգավիճակը մասնակից երկրներում բարելավելու և վերջիններիս արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Առաջարկներ են հնչել Վրոցլավի օրինակով քաղաքային կառավարման և երիտասարդական խորհրդի աշխատանքի լավագույն փորձը տեղայնացնելու և մասնակից երկրների հաջողված փորձով կիսվելու ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

18.09.2024 թ.